ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

05.09.2015թ. ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան /դեկան/
Քարտուղար Գ. Առուշանյան /քարտուղար/
Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Գ. Առուշանյանը, Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյան, Ա. Պոտոսյան, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Ալեքսանյան, ՈՒԳԸ նախագահ Լ. Բլբուլյանը, Ս. Սաֆարյանը:

Օրակարգ

1.Ֆակուլտետի /դեկանատի/ խորհրդի կազմի քննարկման և հաստատման մասին:
/Զեկ.Ն.Խուդավերդյան/
2. 2015 - 2016 ուս. տարվա ֆակուլտետի գիտխորհրդի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին:
/Զեկ.Ն.Խուդավերդյան/
3. 2015 - 16 ուս.տարվա ֆակուլտետի ամբիոնների և դեկանատի խորհրդի աշխատանքային պլանների քննարկման և հաստատման մասին:
/Զեկ. Հ. Մարզպանյան, Գ. Հովհաննիսյան/
4.Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին - դեկանատի խորհրդի կազմի քննարկման մասին

Ն. Խուդավերդյանը ներկայացրեց դեկանատի խորհրդի կազմը և առաջարկեց քննարկել և հաստատել:

1. Ն. Խուդավերդյան խորհրդի նախագահ
2. Գ. Առուշանյան խորհրդի քարտուղար
3. Պ. Ասիլբեկյան «Սերվիս» մասնագիտության խորհրդատու և ֆակուլտետի արհմիության նախագահ
4. Ա. Սարիբեկյան «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության խորհրդատու
5. Լ. Ալեքսանյան ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ
6. Հ. Քարտաշյան «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության երկրորդ կուրսի ավագ

7. Մ. Շահնազարյան «Սերվիս» մասնագիտության երկրորդ կուրսի ավագ

Արտահայտվեց -Գ. Ավետիսյանը

Նա նշեց, որ ներկայիս կազմը բավականին լավ է աշխատել նախորդ ուսումնական տարում, այդ իսկ պատճառով նպատակահարմար է գտնում հաստատել դեկանատի խորհուրդը նույն կազմով:

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի գիտխորհրդի նախագահի կողմից ներկայացված դեկանատի խորհրդի կազմը:

2.Լսեցին - 2015 - 16 ուս. տարվա ֆակուլտետի գիտխորհրդի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին:

Ն. Խուդավերդյանը նշեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի աշխատանքային պլանի կազմման նպատակն է կանոնակարգել ֆակուլտետի գիտխորհրդի գործունեությունը, ինչպես նաև հստակորեն ամրագրել այն բոլոր հարցերը, որոնցով պետք է զբաղվի ֆակուլտետի գիտխորհուրդը ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում, ֆակուլտետի կողմից մշակված և ընդունված ռազմավարության իրագործման համար, ինչն էլ իր հերթին կպայմանավորի ամբիոնային աշխատանքների համակարգված կազմակերպումը:

Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի գիտխորհրդի 2015 – 2016 ուս. տարվա ֆակուլետի խորհրդի աշխատանքային պլանի նախագիծը /նախագիծը կցվում է/:

Արտահայտվեցին - Ա. Պոտոսյանը, Պ. Ասիլբեկյանը

Որոշեցին – հավանություն տալ և հաստատել ֆակուլտետի գիտխորհրդի 2015 – 16 ուս. տարվա աշխատանքային պլանը և ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդի հաստատմանը:

3. Լսեցին - 2015-16 ուս. տարվա ֆակուլտետի ամբիոնների և դեկանատի խորհրդի աշխատանքային պլանների քննարկման և հաստատման մասին:

«Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի վարիչ Հ. Մարզպանյանը, «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը ներկայացրին 2015 - 2016 ուս. տարվա համար նախատեսված ամբիոնների աշխատանքային պլանները:

Հ. Մարզպանյանը նշեց, որ քննարկման ներկայացված ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը ներառում է ամբիոնի գիտակրթական

գործունեության բոլոր հիմնական ուղղությունները, ընթացակարգերն ու գործընթացները, ինչը նպաստում է ուսումնական տարվա ընթացքում ամբիոնային աշխատանքների ճիշտ կազմակերպման և ամբիոնի աշխատանքների ակտիվացման գործին: Այդ աշխատանքը պետք է սկսել 2015-16 ուս. տարվա ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի ճշգրտմամբ: Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչը ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց 2015 – 2016 ուս. տարվա ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը /նախագիծը կցվում է/:

«Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը նշեց, որ քննարկման ներկայացված ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը ներառում է ֆակուլտետի ռազմավարական ծրագրի, դասախոսների անհատական զարգացման պլանների և ամբիոնի գիտակրթական գործունեության բոլոր հիմնական ուղղությունները, ինչը կնպաստի ուսումնական տարվա ընթացքում ամբիոնային աշխատանքների ճիշտ կազմակերպման և ուսման որակի բարձրացման գործին:

«Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը ֆակուլտետի խորհրդի քննարկմանը ներկայացրեց 2015 -2016 ուս. տարվա ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը /նախագիծը կցվում է/:

Արտահայտվեց - խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը

Նա հայտնեց, որ կատարված ուսումնասիրության և համեմատական վերլուծության արդյունքում պարզվել է, որ ամբիոնների աշխատանքային պլանները՝ ըստ թեմատիկ և ժամանակագրական կառուցվածքի, համապատասխանում են ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանին և հավանություն տալով ներկայացրեց քննարկման ու հաստատման:

2015 – 2016 ուս. տարվա դեկանատի խորհրդի աշխատանքային պլանը /օրացույցային պլանը/ ներկայացրեց դեկան Ն. Խուդավերդյանը, որպես դեկանատի խորհրդի նախագահ:

Արտահայտվեց - Հ. Մարգպանյանը

Նա նշեց, որ դեկանի կողմից ներկայացված դեկանատի խորհրդի պլանը արդեն իսկ խոսում է այն մասին, որ առաջնորդվելով դրանով, ֆակուլտետում կակընկալվի ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձր մակարդակ: Հավանություն տալով առաջարկեց այն հաստատել:

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի կառուցվածքում գործող ամբիոնների և դեկանատի խորհրդի աշխատանքային պլանները:

4.Լսեցին - ընթացիկ հարցեր

4.1.Լսեցին - Ֆակուլտետի 2015-2016 ուս. տարվա առաջին կիսամյակի ըստ մասնագիտությունների դասատախտակների քննարկման և հաստատման մասին:

Ն. Խուդավերդյանը ներկայացրեց ֆակուլտետի ըստ գործող մասնագիտությունների 2015 - 2016 ուս. տարվա առաջին կիսամյակի ուսումնական պրոցեսի կազմակերպման դասատախտակները, նշելով, որ այն կազմվել է համաձայն ֆակուլտետում գործող աշխատանքային ուսումնական պլանների նորմերի և դասախոսների անհատական ծանրաբեռնվածության տարեկան բաշխման պլանի:

Արտահայտվեց - Գ. Ավետիսյանը

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2015 - 2016 ուս. տարվա դասատախտակները:

1.2.2015 - 2016 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ֆակուլտետի ուսանողների թեկնածության քննարկման մասին

/Զեկ Ն. Խուդավերդյան/

Նա նշեց, որ դեկանատի կողմից իրականացված համապատասխան ուսումնասիրությունները հանգեցրին նրան, որ ֆակուլտետից «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակի կարող է ներկայացվել ֆակուլտետի ՈՒԽ -ի նախագահ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Լուիզա Ալեքսանյանը, «Սերվիս» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողներ Նինա Գանջալյանը՝ «Սահակ Զորափորեցի», Անի Դավթյանը՝ «Մոնթե Մելքոնյան» և «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Ֆլորա Մանուչարյանը «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի:

Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը

Արտահայտվողները նշեցին, որ «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողուհի Լուիզա Ալեքսանյանը վերջին վեց կիսամյակներում ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, միաժամանակ նա ակտիվորեն մասնակցում է ֆակուլտետում կազմակերպվող բոլոր ուսանողական և գիտական գործընթացներին և աչքի է ընկնում օրինակելի վարքագծով, իսկ «Սահակ Զորափորեցի», «Մոնթե Մելքոնյան» և «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողուհիներ Նինա Գանջալյանը՝ չորս անընդմեջ

կիսամյակ, Անի Դավթյանը՝ երեք անընդմեջ կիսամյակ և Ֆլորա Մանուչարյանը՝ չորս անընդմեջ կիսամյակ ցուցաբերել են գերազանց առաջադիմություն:

Որոշեցին - Հաստատել 2015-2016 ուս. տարվա առաջին կիսամյակի «Շավարշ Մարգարյան», «Սահակ Զորափորեցի», «Մոնթե Մելքոնյան» և «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի հավակնորդներ ֆակուլտետի ուսանողուհիներ Լուիզա Ալեքսանյանի, Նինա Գանջալյանի, Անի Դավթյանի և Ֆլորա Մանուչարյանի թեկնածությունները և ներկայացնել տնօրինությանը:

4.3. Լսեցին - «Զբոսաշրջություն» մասնագիտության 2016-2020 ուսումնական պլանի քննարկման մասին:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ նոր 2016- 2020 ուս. տարվա համար հաստատված «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսումնական պլանի քննարկումներին մասնակից ենք դարձրել ամբիոնի բոլոր դասախոսներին և քննակման արդյունքում ուսումնական պլանը հիմնականում պատրաստ է: 2016-2020 ուս. պլանի համապատասխան պետք է կազմվի «Զբոսաշրջություն» մասնագիտության կրթական ծրագիրը և ժամանակին /մինչև ս/թ նոյեմբերի 10-ը/ ներկայացվի ուսումնամեթոդական վարչություն: Այս աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ է ձևավորել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1. Հովհաննիսյան Գուրգեն
2. Ազիզյան Հռիփսիմե
3. Ասիլբեկյան Պավել

Արտահայտվեցին - Ն. Խուդավերդյանը, Պ. Ասիլբեկյանը

Արտահայտվողները նշեցին, որ «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի ողջ ներուժը ակտիվորեն մասնակցում է նաև «Զբոսաշրջության» մասնագիտության կրթական ծրագրի կազման աշխատանքներին:

Որոշեցին - Մինչև ս/թ նոյեմբերի 10-ը ուսումնամեթոդական վարչություն ներկայացնել «Զբոսաշրջություն» մասնագիտության կրթական ծրագիրը՝ ըստ սամանված ձևաչափի:

Գիտխորհրդի նախագահ ***Ն. Խուդավերդյան***

Քարտուղար ***Գ. Առուշանյան***